ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի՛ ընթերցող,

Ուղիղ 20 տարի առաջ սեղանիդ հայտնվեց անծանոթ մի գիրք, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նորաստեղծ կառույցի՝ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի անդրանիկ հատորն էր: Դու նրան կանաչ ճանապարհ ցանկացար:

Գիտական այս հրատարակության ծնունդը Գյումրիում ջերմորեն ողջունեցին նշանավոր հայագետներ Վլադիմիր Բարխուդարյանը, Լևոն Հախվերդյանը, Արամ Քալանթարյանը, Սարգիս Հարությունյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Սեն Արևշատյանը և ուրիշներ՝ նաև հուսալով, որ ոչմայրաքաղաքային ակադեմիական կառույցի պատվախնդիր ու հաստատակամ երիտասարդ գիտնականների հանրույթի ջանքերով ժողովածուն շարունակական կլինի՝ դառնալով հիրավի առաջին հայագիտական պարբերականը Շիրակի պատմության մեջ:

Այդպես էլ եղավ. Շիրակի Հայագիտականի յուրաքանչյուր գիտաշխատողի համար այն ավելին է, քան ինչ-որ ժողովածու, այն իր ինքնության մի մասն է, իր հպարտությունը, շատերի համար՝ իրենց գիտական կենսագրության սկիզբն ու ընթացքը: Նրա հատորներում տեղ են գտել Կենտրոնի գիտաշխատողների երեք հարյուրից ավելի հոդվածներ, հրապարակումներ, հաղորդումներ: Այդ հատորներում «հյուրընկալվել են» նաև հանրապետության բազմաթիվ անվանի բանագետներ ու ազգագրագետներ, լեզվաբաններ ու գրականագետներ, պատմաբաններ ու հնագետներ, ակադեմիական և բուհական համակարգերի երիտասարդ գիտական կադրեր, արտերկրի շուրջ հինգ տասնյակ հայ և այլազգի գիտնականներ: Ժողովածուի հաջողվածության գաղտնիքը նաև նրա խմբագրակազմի աշխատանքի մեջ է, որում քիչ չեն հանրապետությունում ճանաչված հայագետները՝ Աշոտ Մելքոնյան, Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Լալիկ Խաչատրյան և այլք:

Ժողովածուն եղավ նաև արգասաբեր հարթակ այս բոլոր տարիներին Կենտրոնում իրականացված բուռն հրատարակչական գործունեության համար. նրա հիմքի վրա ձևավորվեց «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշարը, և տպագրվեցին նրա՝ ամբողջական ու ավարտուն աշխատանքներ պարունակող առաջին պրակները, շուրջ 3 տասնյակ մենագրություններ, առանձին գրքերով լույս տեսան Կենտրոնի ուժերով Գյումրիում պարբերաբար գումարվող՝ Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողովների նյութերը: Ժողովածուն այսօր հայագետների շրջանում վաստակած հեղինակություն վայելող, որոշակի գեղագիտական սկզբունքներ դավանող ու բարի ավանդույթներ ունեցող հրատարակություն է՝ ընդգրկված ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդունված պարբերական ժողովածուների ցանկում:

Սիրելի՛ ընթերցող, այսօր քո սեղանին է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի՝ իր քսանամյակը բոլորած Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի արդեն քսաներորդ՝ ասել է թե՝ հոբելյանական հատորը: Իբրև արդարադատ բարեկամ ու անկաշառ ընդդիմախոս՝ նորանոր հատորներ մաղթիր ժողովածուին….

Գլխավոր խմբագիր՝
բան. գիտ. դոկտոր Մերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ